ՀՏԴ 94(31)
Պատմություն

Ալեքսանդր ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտ
e-mail: khachatryan.aleksandr@gmail.com

ՈՒՅԳՈՒՐՆԵՐԸ ՄՈՆԳՈԼԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ (IX-XV ԴԱՐԵՐ)

Գոյություն ունեն բազմաթիվ հիփոթեզեր ույղուրների՝ որպես առանձին էթնիկ խմբի, ի հայտ գալու ճշգրիտ ժամանակի մասին, սակայն ակնհայտ է, որ ույղուրները իրենցից հնագույն էթնոս են ներկայացնում, որոնք գոյատևել են մինչ օրս: Ույղուրների պատմությունը, ինչպես նաև նրանց էթնիկ ծագումը, վեճի առարկա են հանդիսանում ույղուր ազգայնականների և Չինաստանի իշխանությունների միջև:
Ույղուրներն իրենց պատմության տարբեր փուլերի ընթացքում հիմնել են բազմաթիվ պետություններ, որոնցից ամենամեծն ու ամենահայտնին էր Ույղուրական կագանատը: Սակայն Մոնղոլական կայսրության հզորացումից հետո ույղուրները ընկնում են Չինաստանի, այնուհետև մոնղոլական լծի տակ: Ույղուրները մեծ դեր են խաղացել Մոնղոլական կայսրության վարած թե՛ ներքին և թե՛ արտաքին էքսպանսիոն քաղաքականության վրա:
Բանալի բառեր՝ ույղուրներ, Չինաստան, Ասիայի հին ժողովուրդները, ույղուրական կագանատ, չին-ույղուրական հարաբերություններ, Մոնղոոլական կայսրություն, Սին-Ծիանգ ինքնավար մարզի պատմություն

А. Хачатрян

УЙГУРЫ В ЭПОХУ МОНГОЛЬСКОЙ ИМПЕРИИ (IX-XV ВЕКА)

Существует множество точек зрения относительно точного времени появления уйгуров как отдельной этнической группы, но ни у кого нет сомнений в том, что уйгуры - древнейший этнос, дошедший до наших дней. История уйгурского народа, как и этническое происхождение народа, является предметом спора между уйгурскими националистами и властью Китая.
Уйгуры в своей истории основали множество государств, из которых самым известным и большим являлся Уйгурский каганат. Однако после появления Монгольской империи на мировой арене, уйгуры сначала стали частью Китая, а затем самой Монгольской империи. Уйгуры играли важную роль во внутренней и внешней экспансионистской политике Монгольской империи.
Ключевые слова: *уйгуры, Китай, древние народы Азии, Уйгурский каганат, сино-уйгурские отношения, Монгольская империя, история Синьцзян-Уйгурского автономного района*

A. Khachatryan

UIGHURS IN THE ERA OF THE MONGOL EMPIRE (IX-XV CENTURIES)

There are many hypothesizes of the exact time of the uighurs' origin as a separate ethnic group, however it is clear that uighurs are an ancient ethnos which has survived till the present. The Uighur history, as well as their ethnic origin, have been the subject of debate between the Uyghur nationalists and Chinese authorities.

The Uighurs established many states and state unions throughout their history, the largest and most famous of which was the Uighur Khaganate. However, after the Mongol empire spread its influence on the entire region, the Uighurs came under Chinese, and then the Mongol empire's control. The Uighurs played an important role and put impact on both the domestic and foreign expansionary policies of the Mongol Empire.

Keywords. *uyghur, China, ancient nations of Asia, Uyghur Khanate, sino-uyghur relations, Mongol empire, history of the Xin-Jiang Autonomous Region*

Արդեն իսկ IX դարից սկսած՝ ույղուրները զիջեցին իրենց դիրքերը նախ թյուրք ժողովուրդներին, իսկ ավելի ուշ՝ մոնղոլներին: Հայտի է, որ IX-X դարերում Ույղուրական կագանատի ներսում հասունանում էին տարբեր ժողովուրդների անհնազանդության տրամադրությունները: Ի վերջո դրանք հանգեցրին այն բանին, որ 840 թվականին՝ քաղաքացիական պատերազմից հետո, Ույղուրական կագանատը նվաճվեց թյուրքական կիրկիզ ժողովրդի կողմից: Արդյունքում ույղուրների կառավարման տակ գնտվող ժողովուրդները գաղթեցին հյուսիս-արևելյան Չինաստան, որը ներկայիս Սինձիանգ-ույղուրական ինքնավար մարզի տարածքն է:

Հատկանշական է, որ նախքան կագանատի նվաճումը, չինական Թան դինաստիայի հան ներկայացուցիչների կողմից բազմիցս փորձեր են արվել ասիմիլացնել ույղուրներին, մասնավորապես 770-ական թվականներին, չինական իշխանությունները հրաման են արձակում ույղուրների հագուստի վերաբերյալ: Ույղուրները պարտավորվում էին կրել հատուկ տարբերվող հագուստ, որը կխանգարեր նրանց ամուսնանալ չին կանանց հետ և արգելվում էր նաև չինացի ձևանալ: Հիմնական նպատակն էր պահպանել չինական արժեքներն ու ավանդույթները և չշեղվել իրենց ուղղուց:

843 թվականից սկսած՝ չինացիները հետևողական էին ույղուրների զարգացմանը և տեղաշարժին: 847 թվականին, երբ սպանվեց ույղուրների վերջին կագանը, նրանց փոխարինելու եկան Ենիսեյան կիրգիզների կագանատը, որը ավելի քան 70 տարի հզոր դիրք գրավեց Կենտրոնական Ասիայում: Ույղուրների և Ենիսեյան կիրգիզների միջև մշտապես լարված հարաբերությունների էին, իսկ չինական կայսրները մշտապես սպասում էին երկու կողմերի թուլացմանը: Հանձնելով դիրքերը կիրգիզներին՝ ույղուրները հաստատվեցին Սինձիանում, Շանսիի արվարձաններում և Գանսուում: Այստեղ ույղուրները հիմնում են երկու անկախ պետություններ՝ Գանջոույան՝ 870 թվականին, և Քոչո կամ Տուրֆանի պետություն 843 թվականին: Հատկանշական է, որ Տուրֆանի պետության գլուխ էր համարվում կագանը, բայց այլ անվանմամբ՝իդիկուտ: Ամբողջ պետությունը հռչակվել էր Ույղուրական Տուրֆանյան իդիկուտ, որը բառացիորեն թարգմանվում է,

որպես “Սուրբ հարստություն, փառք”: [1] Հետաքրքիր է այն փաստը, որ այդ պետությունները երկուսն էլ անկում են ապրում մոնղոլական հզորացումից, որ 13-14 դարերում գրավում և հպատակեցնում է այդ տեղանքի ժողովորդներին և տալիս վասալների կարգավիճակ: Ի տարբերություն Գանջոույի տերության, որը պահպանել է իր դիրքերը մինչև 1028 թվականը, ույղուրական Տուրֆանյան տերությունը կառավարվելով տարբեր ցեղերի ներկայացուցիչների կողմից, ճանաչեց Մոնղոլիայի գերիշխանությունը և ընդունեց վասալի կարգավիճակը: Այստեղ պետք է նշել նաև Գանջոույի տերությունը կառավարող օղակի դերի մասին, որոնք Յագլաքարյան տոհմից էին և ունեին պետականության հզոր պաշար: Ինչպես նշել էինք, հենց նրանց օրոք էր, երբ Չինաստանի կայսրը օգնություն էր խնդրում ույղուրներին՝ Տիբեթից պաշտպանվելու և դիմակայելու համար: Յագլաքարյան կագանները կամ իշխողները ութն էին, որոնք գրագետ դիվանագիտություն վարելով, գոյատևեցին մինչև 982 թվականին իրենց պետությունը հիմնած տանգուտների կողմից նվաճումը:[2] Տանգուտները իրենց հերթին բուդդիստներն էին, որոնք 13-րդ դարում նույնպես ընկան մոնղոլական լծի տակ:

Ույղուրները տանգուտների տիրապետության տակ հավատարիմ մնացին իրենց կրոնին և չընդունեցին իսլամ:[3] Այդ կոնտեքստում պետք է նաև անդրադառնալ ույղուրների պատմության հաջորդ էջին, որը փոխեց նրանց պատմության ուղղվածությունը, կրոնը և Չինաստանի հետ հարաբերությունները: Խոսքը գնում է Կարախանների դինաստիայի մասին, որը ըստ պատմաբանների սկիզբ է առել ույղուրական կագանատի փլուզումից հետո, երբ Սատուկ Բոհրան, նվաճելով կարլուկների մայրաքաղաքը հռչակում է Կարահանների պետությունը: [4]

Սատուկ Բոհրան շատ մեծ դեր է խաղում Կարահանների զարգացման, մշակույթի և առհասարակ խանության համար: Հասնելով մինչև ներկայիս Չինաստանի ամենաարևելյան կետերից մեկին՝ Կաշգարին, մայրաքաղաքը և կենտրոնը տեղափոխում է Կաշգար գետի հովիտ: Կարահանների կառավարման տարիներին է, որ ույղուրները ընդունում են իսլամը, որպես մանիքեության այլընտրանք: Սատուկ Բոհրան առաջինն էր, որ կրոնափոխվեց և ընդունեց իսլամը՝ փոխելով նույնիսկ իր անունը Աբդ Ալ Քարիմի: Տարածաշրջանում իսլամը ի հայտ եկավ՝ ի շնորհիվ սելջուկների, պարսկական և արաբական ցեղերի, որոնք քոչվորական զավթողական կյանք էին վարում:

Կարախանների կառավարման ժամանակաշրջանը համարվում է ույղուրների պատմության անբաժան և շրջադարձային մասը: Այդ տարիներին Կաշգարից մինչև Գանսու ույղուրները հարմարվողական դիրք էին գրավել և զարգացնում էին ներքին տնտեսությունը, լեզուն, մշակույթը: Կարևոր է այն, որ ույղուրները, սկսած Տուրֆանյան իդիկուտի կամ խանության ժամանակաշրջանից սկսել էին ասիմիլացվել՝ ընդունելով տեղի ժողովուրդների լեզուն, այդ թվում նաև պարսկական, մոնղոլական և չինական, լեզուն, մշակույթը, կրոնը և սովորույթները: Կարախանների օրոք կառուցվում են մի

---

[1] *Տե՛ս Joint Centre for Asia Pacific Studies (1996). Cultural contact, history and ethnicity in inner Asia: p. 134-139*

[2] *Տե՛ս* ***Сычев Н.В****. Книга династий. М., 2008. с. 658-665.*

[3] *Տե՛ս* ***Рулан Н****. Юридическая антропология: учебник / Н. Рулан. – М.: Норма, 1999.*

[4] *Տե՛ս Kazakh Encyclopediasy Limited Liability Partnership / Almaty 2006 / Volume 4 / 487-494 pages*

շարք մզկիթներ, դպրոցներ, դասավանդվում թյուրքական գրականություն, որը հետին պլան է ուղարկում ույղուրական գիրն ու խոսակցական լեզուն:

Կարախանյան պետության ներքին տոհմական խնդիրների պատճառով 1040 թվականին այն բաժանվում է արևելյան և արևմտյան մասերի: Հատկանշական է այն փաստը, որ շուրջ երկու դար գոյատևելուց հետո երկու միավորումներն էլ ընկնում են մոնղոլական լծի տակ: 1089 թվականին սելջուկների արշավանքների պատճառով արևմտյան Կարախանը հռչակում է իրեն սելջուկների վասալը: Իսկ 1212թվականին այն գրավվել է Խորեզմշահերի պետության կողմից՝ Մուհամմադ II-ի օրոք:

Տարածաշրջանում իրենց հզորությունն էին սկսել վայելել և Մուհամմադ II-ը՝ ի դեմս Խորեզմշահերի պետության, և Չինգիզ խանը՝իր իսկ կողմից հիմնադրած Մոնղոլական կայսրությամբ: Խորեզմշահը մտադրություններ ուներ հասնել մինչև Պեկին և գրավել Չինաստանը, սակայն Չինգիզ խանը 1215 թվականին առաջինն է հասցնում գրավել այն: Բացի այն, որ Կարախանյան պետության մնացորդները ոչնչացվեցին Խորեզմշահի կողմից, Չինգիզ խանը, իր հերթին պատերազմ հայտարարելով Մուհամմադ II-ին 1221 թվականին նվաճում է Խորեզմշահերի պետությունը և հասցնում Մոնղոլական կայսրությունը իր հզորության բարձրակետին:

XIII-XVI դարերում տարածաշրջանում տեղի են ունենում բազմաթիվ փոփոխություններ, որոնք ահռելի հետք են թողում ժամանակակից քարտեզի վրա տեղ գտած պետությունների վրա: Ույղուրներ, ինչպես նաև չինացիները, լինելով Մոնղոլական կայսրության մի մասը հաճախ ընդիմանում էին, սակայն չէին կարողանում անկախանալ: Հայտնի է, որ Մոնղոլական կայսրությունը իր այդ տեսակով գոյատևեց մինչև XIII դարի վերջ, իսկ Չինաստանում մոնղոլական Յուան դիանաստիան կառավարեց մինչև 1368 թիվը: Իրավիճակը փոքր ինչ փոխվում է Չինգիզ խանի մահից հետո՝ 1227 թվականին, երբ նրա պետությունը բաժանվում է 4 որդիների միջև, որոնցից երրորդ որդի Ուգեդեյը դառնում է Մեծ Խան կառավարելով տերությունը: Հատկանշական է, որ հենց Ուգեդեյի կառավարած տարիներին է, որ գրավվում է Չինաստանի հյուսիսային մասը, Հայաստանը, Վրաստանը և այլ տարածքներ:

Չինգիզ խանի մահից հետո, շրջանները որտեղ մեծապես բնակվում էր ույղուր ժողովուրդը բաժին է ընկնում Չաղաթայի կողմից կառավարվող Չաղաթայի ուլուսին: Այն իր մեջ ներառում էր Մավերաննահրը, ամբողջ Արևելյան Թուրքեստանը, Տուրֆանը և իհարկե ներկայիս Կաշգարի տարածքը: Ույղուրները միշտ հավատարիմ են եղել իրենց ղեկավարներին և մասնակցել մի շարք պատերազմների: Ներպետական խմորումների և առավել ևս Չաղաթայի մահից հետո Չաղաթայի ուլուսը մասնատվում է երկու մասի՝ Մոգուլիստանի և Մավերաննահրի: Սակայն մինչև փլուզումը պետք է նշել, որ 1326 թվականին ամբողջ ուլուսի պաշտոնական կրոն ճանաչվեց իսլամը, որը էլի ավելի ամրապնդեց իսլամական արմատները ույղուրների պատմության մեջ: Արևմտյան մասը, ի դեմս Մավերաննահրի բնակչության հիմնականում մահմեդականներ էին, իսկ արևելյանը՝ Մոգուլիստանը, մոնղոլներ էին և հավատում էին բուդդիզմին: [1]

Կարևոր է այն, որ Չինգիզ խանի հետնորդները և թոռները տիրացան ամողջ Ասիային և Չինաստանի մի մասին: Պատմության այդ ժամանակաշրջանը իրենից ենթադրում էր Չինգիզ խանի հետնորդի հայտնվելուն, որոնք

[1] Տե՛ս ***Sh. Tseyen-Oidov*** / *"From the Genghis Khan to Ligden Khan" 2002 / Mongolian History*

կկատարեր Չինգիզ խանի պլանը՝տիրանալ Չինաստանին և Ասիայի արևելյան շրջաններին: Չաղաթայի խանության արևմտյան շրջաններին տիրանալով՝ տարածաշրջանում հայտվում է մի նոր ակտոր՝ Լենկթեմուրը, որը չուներ Չինգիզ խանի հետ որևէ ժառանգական կապ, սակայն ձգտում էր վերականգնել Մոնղոլական կայսրության վաղեմնի հզորությունը: Լենկթեմուրը հասնելով և գրավելով Թուրքիան, հարավային Ռուսաստանը, Հայաստանը, Վրաստանը, Հնդկատանը և մի շարք այլ տարածքներ, ցանկանում էր ամրապնդել նաև արևելյան սահմանները: Արևելքում, ինչպես արդեն նշել էինք, Մոնղոլական կայսրությունից ազատվելով, Չինաստանում՝1368 թվականից հաստավում է Մին դինաստիան, որը ձեռնամուխ է լինում երկիրը զարգացմանը: Չինացիները այդ տարիներին հմուտ և խորամանկ դիվանագիտություն են վարում բազմապիսի ցեղերի և ցեղախմբերի հետ՝ հաճախակիորեն ուղարկելով նրանց հարևան երկրներ: Արևելյան ճակատում Լենկթեմուրը ցանկանում էր գրավել Չինաստանի Մետաքսյա ճանապարհի մնացած ուղղությունները և զրկել Չինաստանի Մին դինաստիային հետագա առաջխաղացումից: Սկսած 1398 թվականից՝ Լենկթեմուրը պլանավորում էր արշավել դեպի Չինաստան, իսկ 1404 թվականին նա, վերադառնալով մայրաքաղաք Սամարկանդ, սկսում է իր պայքարը Չինաստանի դեմ: Սակայն ցուրտ ձմեռվա պատճառով 1404 թվականի վերջում ժամանկավորապես դադարեցվում է առաջխաղացումը, իսկ 1405 թվականանին Լենկթեմուրը մահանում է: Հետաքրքիր զուգադիպությամբ և Չինգիզ խանին, և Լենկթեմուրին չի հաջողվում գրավել Չինաստանը:

Ույղուրները այդ տարիներին զբաղեցնում էին հյուսիսային Չինաստանի Գանսու, ժամանակակից Սին-Ծիանգ Ինքնավար մարզի և Մոգուլիստանի տարածքները:

Ույղուրական պատմության այս էջը կարելի է փակված համարել, որը, մեծ ազդեցություն թողնելով ույղուր էթնոսի վրա, բացելու է հերթական պատմական փուլը, սակայն այս անգամ Չինական դինաստիաների հետ բուռն պայքարներով և պետականություն ստեղծելու խորը ձգտումով:

Գրականություն

1. Байчоров А.М Китаизация. Последствия роста мощи Китая для мира в XXI веке. - Москва:
2. Изд.«Международные отношения", 2013, 192с
3. Бондаренко А.В. Синьцзян-Уйгурский автономный район Китая в начале XXI в.
4. М.: Изд. ИДВ РАН, 2010, 176 с.
5. Буяров, Д.В. Современный Китай в системе международных отношений / Д.В. Буяров.
6. Москва: Изд.СИНТЕГ, 2015. - 632 с
7. Владимиров, О. Страницы политической биографии Мао Цзэ-дуна / О. Владимиров, В.
8. Рязанцев. - М.: Издательство политической литературы, 2001. - 112 с.
9. Восточный Туркестан в древности и раннем средневековье. Тт. 1-4. М. Изд. ГРВЛ. 1988. 456 с.
10. Григорьев В.В. Землеведение К. Риттера. География стран Азии, находящихся в непосредственных сношениях с

Россией. Восточный или Китайский Туркестан. СПб. «Типография К. Замысловского»1869, 530 с
11. Даниэль, Елисеев История Китая. Корни настоящего / Елисеев Даниэль. - М.: Изд. «Евразия»,2008. - 255 с
12. Зотов О.В. Китай и Восточный Туркестан в XV-XVШ вв. Межгосударственные отношения. М., «Наука», 1991, 168 с
13. Исхаков, Г.М. Уйгурское население на территории Средней Азии / Г.М. Исхаков //Фольклор, литература и история Востока. - Ташкент: «Фан», 1984, 510
14. Китай в мировой политике. - М.: Российская политическая энциклопедия, Московский государственный институт международных отношений (Университет), МИД РФ, 2001. - 528 с.
15. Киреев А.А Современный Китай в системе международных отношений. - Москва:2014.
16. Китай после "культурной революции". - М.: «Мысль», 1979. - 360 с
17. Лексютина Я.В., Петрунина Ж.П., Киреев А.А.Современный Китай. Страницы истории, Москва: «Ленанд», 2016, 368 с
18. Малявкин, 1972. Малявкт А. Г. Китай и уйгуры в 840-848 гг. // Сибирь, Центральная и Восточная Азия в средние века. - Новосибирск, «Наука»1972, 236 с
19. Радлов, В.В. К вопросу об уйгурах / В.В. Радлов. - СПб., Тип. Акад. наук, 1893. - 130 с
20. Разов, С. С. Китайская Народная Республика. Справочник: моногр. / С.С. Разов. - М.: Издательство политической литературы, 1989. - 277 с.
21. Скрайн К.П. Китайская Центральная Азия (Синьцзян). М., «Молодая Гвардия», 1935, 143
22. Muldavin Joshua / «From Rural Transformation to Global Integration: The Environmental and Social Impacts of China's Rise to Superpower» : 2006
23. Rian Thum. The Sacred Routes of Uyghur History. Harvard University Press. pp. 113
24. Yitzhak Shichor, Ethno-Diplomacy: The Uyghur hitch in Sino-Turkish relations, East-West Center, Honolulu, 2009, 72p

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Մ.Ավանեսյանը: